

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ սահմանվում են Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 2-րդ մասի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկի նկարագիրը, ռիսկայնության խմբերը, ռիսկի վրա ազդող գործոնները և ռիսկի մակարդակի վերլուծության սկզբունքները, ինչպես նաև Ծրագրի 2-րդ մասի կազմման հետ կապված այլ հարաբերություններ: Ծրագրի 1-ին մասը կազմվում է Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի հիման վրա:

(1-ին կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2022թ. հոկտեմբերի 25-ի թիվ 196-Լ որոշում):

2. Սույն մեթոդաբանության նպատակը ռիսկ պարունակող հաշվեքննությունների ընտրության միջոցով Ծրագրի 2-րդ մասի կազմումն է, որը կոչված է ապահովել օրինականության և տնտեսման, նպատակային ու ծախսային արդյունավետության սկզբունքների համաձայն՝ Ծրագրի 2-րդ մասով նախատեսված հաշվեքննությունների (այսուհետ՝ թեմատիկ հաշվեքննություններ) իրականացումը:

3. Սույն մեթոդաբանության կիրառմամբ երաշխավորվում է Հաշվեքննիչ պալատի կողմից թեմատիկ հաշվեքննությունների իրականացումը՝ հետևյալ պարտադիր պայմաններով՝

- 1) հաշվեքննությունները սահմանվում են Հաշվեքննիչ պալատի ժամանակային, իրավական, կադրային և տեխնիկական կարողություններին համապատասխան,
(1-ին ենթակետը փոփոխ.՝ ՀՀ ՀՊ 2022թ. հոկտեմբերի 25-ի թիվ 196-Լ որոշում):
- 2) հաշվեքննությունների իրականացման ընթացքում Հաշվեքննիչ պալատի վարքագծի կանոնները (այդ թվում՝ Հաշվեքննիչ պալատի անդամի և հաշվեքննողի անկախությանն առնչվող կանոնները) վտանգված չեն,
- 3) առկա չէ այնպիսի առևերույթ տեղեկատվություն այն մասին, որ հաշվեքննության օբյեկտի կողմից կարող է վտանգված լինել Հաշվեքննիչ պալատի օրինական պահանջների լիարժեք կատարումը:

4. Հաշվեքննությունը կազմակերպվում և իրականացվում է Ծրագրի հիման վրա, Օրենքի պահանջներին համապատասխան: Ծրագիրը բաղկացած է երեք մասերից, որի 2-րդ մասում ընդգրկվում են սույն մեթոդաբանությամբ ընտրված թեմատիկ հաշվեքննությունները՝ ըստ հաշվեքննության օբյեկտի, հաշվեքննության առարկայի և հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման:

5. Սույն մեթոդաբանությունը հանդիսանում է նաև Հաշվեքննիչ պալատի որակի կառավարման համակարգի տարր, որն ապահովում է ռիսկերի կառավարման ռազմավարության պատշաճ կիրառումը՝ Հաշվեքննիչ պալատին հնարավորություն

ընձեռնելով հաշվեքննության օբյեկտների նկատմամբ իրականացնել տարբերակված և յուրաքանչյուր հաշվեքննության օբյեկտի և /կամ/ հաշվեքննության առարկայի ռիսկի նկարագրին համարժեք հաշվեքննություն, միաժամանակ՝ արդյունավետ կերպով օգտագործելով Հաշվեքննիչ պալատի կադրային և տեխնիկական ռեսուրսները:

5.1 Հաշվեքննիչ պալատը Ծրագիր կազմելիս հաշվի է առնում ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման համար սահմանված միջոցառումները:

(5.1-րդ կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2022թ. հոկտեմբերի 25-ի թիվ 196-Լ որոշում):

6. Սույն մեթոդաբանության մեջ օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված իմաստներով, եթե այլ բան սահմանված չէ սույն մեթոդաբանությամբ:

2. ՌԻՍԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

7. Սույն մեթոդաբանության իմաստով ռիսկը՝ հաշվեքննության օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում վերջինիս կողմից անահապատասխանություններ ու խեղաթյուրումներ թույլ տալու, ինչպես նաև տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների չպահպանման հավանականությունն է:

8. Ծրագրի 2-րդ մասով նախատեսված հաշվեքննության օբյեկտները, որոնք պետական մարմիններ են, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների իմաստով՝ դասակարգվում են բարձր, միջին և ցածր ռիսկայնության խմբերի՝ ըստ պետական բյուջեից ֆինանսավորված գումարի չափի (այդ թվում՝ այլ պետություններից հատկացվող վարկային և դրամաշնորհային գումարների), հետևյալ կարգով.

1) բարձր ռիսկային՝ եթե հաշվեքննության օբյեկտին կատարված տվյալ տարվա բյուջետային հատկացումները գերազանցում են ընդհանուր բյուջետային հատկացումների 1 %-ը.

2) միջին ռիսկային՝ եթե հաշվեքննության օբյեկտին կատարված տվյալ տարվա բյուջետային հատկացումները գերազանցում են ընդհանուր բյուջետային հատկացումների 0,1 %-ը.

3) ցածր ռիսկային՝ եթե հաշվեքննության օբյեկտին կատարված բյուջետային հատկացումները չեն գերազանցում ընդհանուր բյուջետային հատկացումների 0,1 %-ը:

(8-րդ կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում, փոփոխ. ՀՊ 2022թ. հոկտեմբերի 25-ի թիվ 196-Լ որոշում):

8.1. Կատարողականի հաշվեքննության իմաստով ռիսկին վերաբերող հիմնահարցերը կարգավորվում են հավելվածի 19-րդ և 20-րդ կետերով:

(8.1-րդ կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում):

8.2. ՏԻՄ հաշվեքննությունների առնչությամբ ռիսկին վերաբերող հիմնահարցերը կարգավորվում են հավելվածի 15-րդ կետով:

(8.2-րդ կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում):

3. ԹԵՄԱՏԻԿ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

9. Թեմատիկ հաշվեքննություններն ընդգրկում են Սահմանադրությամբ և Օրենքով Հաշվեքննիչ պալատի համար սահմանված հաշվեքննություն իրականացնելու ողջ լիազորությունների շրջանակը:

10. Թեմատիկ հաշվեքննությունները կարող են լինել ֆինանսական, համապատասխանության և կատարողականի տեսակներով՝ օգտագործելով Օրենքով նախատեսված հաշվեքննության բոլոր ընթացակարգերը:

11. Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում ազատ է հաշվեքննության տեսակի և ընթացակարգի ընտրության հարցում, բացառությամբ, եթե Օրենքով սահմանված է տվյալ հաշվեքննության առարկայի համար հաշվեքննության որոշակի տեսակ կամ ընթացակարգ:

12. Թեմատիկ հաշվեքննությունները, ըստ հաշվեքննության օբյեկտների, դասակարգվում են հետևյալ հիմնական խմբերի՝

- 1) պետական մարմիններ և հիմնարկներ.
- 2) տեղական ինքնակառավարման մարմիններ և հիմնարկներ:

13. Թեմատիկ հաշվեքննությունները, ըստ հաշվեքննության տեսակների, դասակարգվում են հետևյալ հիմնական խմբերի՝

- 1) ֆինանսական.
- 2) համապատասխանության.
- 3) կատարողականի:

14. Թեմատիկ հաշվեքննությունները, ըստ հաշվեքննության առարկայի, դասակարգվում են հետևյալ հիմնական խմբերի՝

1) հանրային ֆինանսների ոլորտում պետական կամ համայնքային բյուջետային ելքերի և մուտքերի հետ կապված ֆինանսատնտեսական գործունեություն,

2) հանրային սեփականության ոլորտում պետական կամ համայնքային սեփականության օգտագործման հետ կապված ֆինանսատնտեսական գործունեություն:

15. Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատի անդամների առաջարկությունների հիման վրա իրականացվում է միմյանց չկրկնող առնվազն մեկ ֆինանսական և /կամ/ համապատասխանության հաշվեքննություն տեղական ինքնակառավարման մարմնում, առաջնահերթությունը տրամադրելով այն մարմին, որը առավելագույնս է բավարարում հետևյալ չափանիշներին՝

- 1) ֆոնդային բյուջեի տեսակարար կշիռը ընդհանուր համայնքային բյուջեում,
- 2) աշխատանքի վարձատրության և հավասարեցված վճարներից բացի ծախսերի տեսակարար կշիռը վարչական ծախսերում,
- 3) պետական բյուջեից ֆինանսավորված գումարի՝ դոտացիայի չափը,
- 4) պետական բյուջեից հատկացված սուբվենցիաների և այլ միջոցների չափը,
- 5) ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի չափը,
- 6) համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների չափը,

7) զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանվող հանրության վերաբերմունքը ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ /եթե ծրագրի նախագծի կազմման պահի դրությամբ հանրության վերաբերմունքը ծրագրի նկատմամբ բացասական է, ապա առանջնահերթությունը բարձր է, եթե չեզոք է՝ միջին, եթե դրական է՝ ցածր/:

(15-րդ կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում):

4. ԾՐԱԳՐԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

16. Ծրագրի 2-րդ մասի կազմման համար թեմատիկ հաշվեքննություններն ընտրվում են՝ ըստ առաջնահերթության առանջնորդվելով հետևյալ գործոններով՝

1) սահմանադրական և օրենսդրական պահանջներից ելնելով՝ պետք է իրականացնել որևէ հաշվեքննություն՝ նախապես սահմանված հաշվեքննության հիմնական (էական) պայմաններով,

2) սահմանադրական և օրենսդրական պահանջներից ելնելով՝ պետք է իրականացնել որևէ հաշվեքննություն, սակայն հաշվեքննության հիմնական (էական) պայմանները որոշում է Հաշվեքննիչ պալատը,

3) նախորդ տարվա համար նախատեսված հաշվեքննությունը չի ավարտվել և տեղափոխվում է հաջորդ տարի,

4) իր լիազորությունների շրջանակներում Հաշվեքննիչ պալատն է որոշում իրականացնել որևէ հաշվեքննություն՝ իր իսկ որոշած պայմաններով,

5) հաշվեքննության յուրաքանչյուր տեսակի համար նախընտրելի ծածկույթի մակարդակ:

16.1. Ծրագրի 2-րդ մասով հաստատված հաշվեքննության ենթակա ծրագրային կետերը չեն ներառում տվյալ ժամանակահատվածում Ծրագրի 1-ին մասով հաստատված օբյեկտներում հաշվեքննության իրականացում, բացառությամբ՝ 17-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքի:

(16.1-րդ կետը լրաց.՝ ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում):

17. Ծրագրի 2-րդ մասում պետական մարմիններում ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ենթակա ծրագրային կետերն անհրաժեշտ է սահմանել՝ առաջնորդվելով հետևյալ հաջորդականությամբ.

1) ընդգրկել նախորդ տարվա գործունեության ծրագրի 2-րդ մասով նախատեսված, սակայն չավարտվելու կապակցությամբ հաջորդ տարվա գործունեության ծրագիր տեղափոխման ենթակա ծրագրային կետերը,

2) ընդգրկել Ծրագրի 1-ին մասում չներառված ֆինանսական և /կամ/ համապատասխանության հաշվեքննությունների իրականացման ծրագրային կետեր այնպես, որ.

ա . յուրաքանչյուր տարի իրականացվի միմյանց չկրկնող առնվազն մեկ հաշվեքննություն՝ բարձր ռիսկային հաշվեքննության օբյեկտի նկատմամբ,

բ. հինգ տարվա ընթացքում իրականացվեն միմյանց չկրկնող առնվազն երկու հաշվեքննություններ՝ միջին ռիսկային հաշվեքննության օբյեկտների նկատմամբ,

գ. հինգ տարվա ընթացքում իրականացվի միմյանց չկրկնող առնվազն մեկ հաշվեքննություն՝ ցածր ռիսկային հաշվեքննության օբյեկտի նկատմամբ,
դ. սահմանված հաշվեքննության օբյեկտների հաշվեքննությունը չընդգրկի այնպիսի ժամանակահատված, որի նկատմամբ Հաշվեքննիչ պալատը նախկինում երբևէ իրականացրել է համանման հաշվեքննություն,

3) իրականացնել սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված հաշվեքննության օբյեկտների ընտրությունը, հաշվի առնելով՝

ա. ոլորտի ծրագրերի քանակը /եթե տվյալ օբյեկտի կողմից իրականացվող ծրագրերի թիվը գերազանցում է 10-ը՝ առաջնահերթությունը բարձր է, եթե գերազանցում է 5-ը, բայց չի գերազանցում 10-ը՝ միջին, եթե չի գերազանցում 5-ը՝ ցածր/,

բ. նախորդ ժամանակահատվածում հաշվեքննության հաճախականությունը /եթե չի հաշվեքննվել կամ հաշվեքննվել է առնվազն 3 տարի առաջ՝ առաջնահերթությունը բարձր է, եթե հաշվեքննվել է նախորդող 1-2 տարիների ընթացքում՝ միջին, եթե նախորդ տարվա ընթացքում՝ ցածր,

գ. շահառուների քանակական կազմը /առաջնահերթությունը տրվում է այն ոլորտներին, որոնց շահառուների տեսակարար կշիռը բնակչության կազմում առավելագույնն է/,

դ. զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանվող հանրության վերաբերմունքը ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ /եթե ծրագրի նախագծի կազմման պահի դրությամբ հանրության վերաբերմունքը ծրագրի նկատմամբ բացասական է, ապա առաջնահերթությունը բարձր է, եթե չեզոք է՝ միջին, եթե դրական է՝ ցածր/:

(17-րդ կետը փոփ.՝ ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում):

18. Ուժը կորցրած է ճանաչվել (ՀՀ ՀՊ 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 299-Լ որոշում):

19. Ծրագրի 2-րդ մասում անհրաժեշտ է հանրային հատվածի հետևյալ ոլորտներից առնվազն հինգում սահմանել կատարողականի հաշվեքննության ծրագրային կետեր՝ յուրաքանչյուրը միմյանցից տարբերվող ոլորտներից՝

- 1) պաշտպանություն.
- 2) կրթություն, գիտություն.
- 3) շրջակա միջավայր /բնապահպանություն/.
- 4) առողջապահություն.
- 5) ենթակառուցվածքներ.
- 6) ազգային տնտեսական զարգացում.
- 7) պետական /համայնքային/ եկամուտների հավաքագրում.
- 8) հանրային հատվածի նշանակալի ծրագրեր.
- 9) հանրային ֆինանսներ և հանրային կառավարում.
- 10) սոցիալական ապահովություն և աշխատանքի ռեսուրսներ.
- 11) հասարակական կարգի պահպանություն:

20. Հաշվեքննիչ պալատը յուրաքանչյուր տարի վերլուծում է կատարողականի հաշվեքննության հնարավոր թեմաները և հետազոտում յուրաքանչյուրին առջվող

ռիսկերն ու հիմնախնդիրները, առաջնահերթությունը տրամադրելով այն թեմաներին, որոնք առավել են բավարարում հետևյալ չափանիշներին՝

1) ընտրված ծրագրային կետերը պետք է ժամանակին արտացոլեն հանրության, Ազգային ժողովի, զանգվածային լրատվամիջոցների և այլ շահառուների կողմից՝ հաշվեքննության իրականացման ակնկալիքները, նրանցից ստացված ազդակները՝ պահպանելով քաղաքական չեզոքությունը և չվտանգելով Հաշվեքննիչ պալատի անկախությունը,

(20-րդ կետը փոփոխ.՝ ՀՀ ՀՊ 2022թ. հոկտեմբերի 25-ի թիվ 196-Լ որոշում):

2) ընտրված ծրագրային կետերը պետք է լինեն բավարար նշանակալի այնպես, որ ունենան առավելագույն ազդեցության ներուժ: Ազդեցության ներուժի գնահատականը պետք է հիմնված լինի ծրագրային կետի հաշվեքննության՝ հաշվեքննության օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության տնտեսող, նպատակային կամ ծախսային արդյունավետությունը բարձրացնելու, տնտեսական և /կամ/ սոցիալական ազդեցություններ ունենալու, հանրության լայն շերտերի վրա ազդելու, Հաշվեքննիչ պալատի հեղինակությունը բարձր պահելու վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի մասնագիտական գնահատականի վրա,

3) ընտրված ծրագրային կետերը հաշվեքննության ենթարկելու համար Հաշվեքննիչ պալատը պետք է ունենա հաշվեքննության համար բավարար չափով տեղեկատվության հասանելիություն,

4) ընտրված հաշվեքննության առարկաների՝ նախկինում հաշվեքննության ենթարկված լինելու հանգամանքը,

5) հաշվեքննության օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության՝ տնտեսող, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքներին բավարարելու վերաբերյալ բացակայում է կամ բավարար մակարդակի չէ անհրաժեշտ տեղեկատվությունը,

6) ընտրված հաշվեքննության առարկայի գծով առկա է խոշոր բյուջետային ֆինանսավորում,

7) ընտրված հաշվեքննության առարկայի գծով առկա է պետական բյուջեի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարողականի ցածր մակարդակ:

21. գործողությունը դադարեցվել է (ՀՀ ՀՊ 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 176-Լ որոշում):

22. Եթե Ծրագրի հաստատումից հետո հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք արտաքին շահառուների մոտ ձևավորում են նոր կամ լրացուցիչ հաշվեքննության հասարակական պահանջ կամ հանրային լրատվական ազդակների հիման վրա Հաշվեքննիչ պալատի կարծիքով պետք է իրականացվեն հաշվեքննություններ, ապա Հաշվեքննիչ պալատը կարող է քննարկել այդ դեպքերը և դրանց մասով սահմանել նոր ծրագրային կետեր՝

1) հաջորդ տարվա Ծրագրում,

2) կամ ընթացիկ տարվա Ծրագրում լրացում՝ կատարելու միջոցով, եթե սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում կարող է խախտվել հաշվեքննության հաշվետվությունը ժամանակին հանրությանը, Ազգային ժողովին, Կառավարությանը և այլ շահառուներին ներկայացնելու սկզբունքը: